Հայտարարություն Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ

Քսան տարի առաջ՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 58/4 բանաձևով ընդունեց Կոռուպցիայի դեմ կոնվենցիան և դեկտեմբերի 9-ը հռչակեց որպես Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր:

2023 թվականը նշանավորվում է նաև Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի 20-ամյակով՝ հաշվի առնելով, որ հակակոռուպցիոն առաջին ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ուժի մեջ են մտել 2003 թ. դեկտեմբեր 20-ին:

Անցած 20 տարիներին Հայաստանն ունեցել և իրականացրել է չորս հակակոռուպցիոն ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ծրագրերով: Միացել է միջազգային հակակոռուպցիոն կոնվենցիաներին և ստանձնել մի շարք պարտավորություններ: Պետության կողմից վարվող հակակոռուպցիոն քաղաքականությունը եղել է խիստ անարդյունավետ, երբեմն կրել է իմիտացիոն բնույթ և հիմնականում միտված է եղել կանխարգելման միջոցառումների իրականացմանը, օրենքների ընդունմանը, էթիկայի հանձնաժողովների ստեղծմանը: Սակայն օրենքների ճնշող մեծամասնությունը մնում էր թղթի վրա, իսկ ստեղծված ինստիտուտների արդյունավետությունը ցածր էր: Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) տվյալներով, հակակոռուպցիոն պայքարի առումով, անցած տարիների մեծ մասը բնութագրվել է որպես «լճացման» տարիներ:

Կոռուպցիայի դեմ պայքարի իրավիճակի էական բարելավում արձանագրվեց միայն 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո: Հանրային տրամադրություններում նկատվեց զգալի փոփոխություն: ԹԻ ԿԸՀ արժեքը 2019-2020 թվականներին աճեց միանգամից 14 միավորով՝ «լճացման» տարիների 35 միավորից հասնելով 49-ի: 2021 թվականին այն մնաց անփոփոխ, իսկ 2022 թվականին նահանջեց՝ իջնելով 46-ի:

ԹԻ-ն այդ նահանջը գնահատեց որպես «անհանգստացնող» և արձանագրեց, որ այն «արտացոլում է զսպումների և հակակշիռների պահպանման, իրավապահ մարմինների բարեվարքության, դատական համակարգի անկախության ապահովման և քաղաքացիական տարածքի պաշտպանության հարցերում առկա հետընթացը:»

Նմանապես անհանգստացնող են 2023 թ. հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները:

- Հարցվածների 73%-ը գտնում է՝ կոռուպցիան երկրի համար շատ լուրջ կամ որոշ չափով լուրջ հիմնախնդիր է, և միայն 25%-ի կարծիքով է այն շատ փոքր կամ որոշ չափով փոքր հիմնախնդիր:
- Հարցվածների 60%-ը համարում է, որ վերջին 12 ամիսների ընթացքում կոռուպցիայի մակարդակը Հայաստանում աճել է կամ մնացել է անփոփոխ:
- Հարցվողների միայն 2%-ն է նշել կոռուպցիայի կանխարգելումը՝ որպես կառավարության վերջին 6 ամիսների ամենամեծ նվաճում: Առավել մեծ խումբը՝ 43%-ը, նշել է, որ ոչ մի նվաճում կառավարությունը չի ունեցել:
- Կառավարության կողմից անցկացվող հակակոռուպցիոն բարեփոխումների մասին հարցին հարցվողների 46%-ը դժվարացել կամ հրաժարվել է պատասխանել, իսկ 32%-ը ասել է, որ տեղյակ չէ այդպիսի բարեփոխումների մասին:

- Հարցվածների 43%-ը կարծում է, որ վերջին 6 ամիսների ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարը որոշ չափով կամ զգալիորեն բարելավվել է, իսկ 23%-ի կարծիքով այն որոշ չափով կամ զգալիորեն վատացել է: Այս պատասխանները հատկապես խնդրահարույց են 2018 և 2019 թթ. նույնանման հարցումների արդյունքների համադրմամբ: Ընդամենը 4-5 տարիների ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարում իրավիճակի բարելավում ընկալողների տեսակարար կշիռը երկրում նվազել է մոտ 2 անգամ (82%-ից հասնելով 43%-ի), իսկ վատթարացում ընկալողներինը՝ աճել 11.5 անգամ (2%-ից հասնելով 23%-ի):

2023 թվականը նշանավորվեց ՀՀ կառավարության կողմից թվով 5-րդ հակակոռուպցիոն ռազմավարության և 2023-2026 թթ. միջոցառումների ծրագրի ընդունմամբ: Այս փաստաթղթերի փաթեթը մշակվեց մասնակցային գործընթացների արդյունքում՝ ներառելով շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներին: Հակակոռուպցիոն նոր ռազմավարությամբ նախատեսված են հավակնոտ ու էական միջոցառումներ հակակոռուպցիոն ինստիտուտների լիարժեք կայացման, դրանց գործունեության արդյունավետության ու կարողությունների զարգացման համար: Այդ միջոցառումների իրագործումը կարող է զգալի առաջընթաց ապահովել Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարում:

2023 թ. վերանայված և լրամշակված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը և նախատեսվող գործողությունների ծրագիրն իրենց հերթին ձևավորում են լրացուցիչ ակնկալիքներ հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված միջոցառումների արդյունավետ իրականացման գործում՝ հանրային կառավարման ոլորտում ապահովելով կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար առավել բարենպաստ միջավայր:

Միևնույն ժամանակ, զուգահեռ իրականության մեջ, 2023 թվականն աչքի է ընկել կոռուպցիայի մի շարք բացասական դրսևորումներով: ԹԻՀԿ դիտարկումներով առկա են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհարիր և անպատասխանատու վարքագիծը, հովանավորչությունը, չհիմնավորված և/կամ մեկ անձից գնումների շարունակվող ավանդույթը, պաշտոնյաների ներգրավվածությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ, նրանց փոխկապակցված անձանց շահումները հանրային գնումներում, կոռուպցիոն նոր սխեմաների ձևավորումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ցածր ցուցանիշը, ապօրինի հարստացման և գույքի բռնագանձման գործընթացում միայն նախկին պաշտոնյաներին թիրախավորելը

Կոռուպցիայի դեմ պայքարի անարդյունավետությունը հաճախ վերագրվում է քաղաքական կամքի բացակայությանը. կոռուպցիայի դեմ պայքարը ոչ միայն հայտարարություններ անել, օրենքներ ընդունել, ռազմավարություններ և միջազգային պարտավորություններ ստանձնել է, այլև դրանք կյանքի կոչել, համապատասխան միջոցներ և կարողություններ մոբիլիզացնել, վճռականություն ու նախաձեռնողականություն ցուցաբերել, պատշաճ ջանադրում ու կատարողական ապահովելն է: Այն ակնկալում է ոչ միայն երկրի բարձրագույն ղեկավարության կողմից բարձրաձայնած մտադրություն, այլև իշխող քաղաքական ուժի, բարձրաստիճան, հակակոռուպցիոն ու վերահսկող մարմինների տարբեր մակարդակների բոլոր պաշտոնյաների ամենօրյա ջանքերն ու օրինակելի վարքագիծ: Առանցքային կարևորություն ունի պետական կառույցների, հատկապես ՀՀ Ազգային ժողովի վերահսկող, զսպող և հակակշռող գործառույթի իրականացումը:

Դիտարկված միտումների զարգացումն ու ամրապնդումը կարող է արագորեն հանգեցնել «պետության զավթման» ռիսկերի մի նոր համակարգի ձևավորմանը: ՀՀ կառավարությունը

պետք է լրջորեն վերագնահատի իր գործողություններն ու ձախողումները կոռուպցիայի դեմ պայքարի դաշտում և հետևողականություն դրսևորի հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված գործողությունների լիարժեք իրականացման համար: Անհրաժեշտ են վճռական քայլեր, որոնք կօգնեն ամրապնդել պետական ինստիտուտները և վերականգնել դրանց նկատմամբ հանրային վստահությունը՝ դիմակայելու Հայաստանի Հանրապետության առջև ներկայումս ծառացած ահռելի մարտահրավերներին: